CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն
Մարտի 18, 2024 թ.

ՔՈԱՖ-ը հայտարարում է իր գարնանային դրամահավաքի մասին՝ ուղղված անգլերեն ծրագրերի ընդլայնմանը

ԵՐԵՎԱՆ — «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ), որը հանրապետության առաջատար կրթահեն հասարակական կազմակերպություններից է, սկսում է նոր դրամահավաք՝ ուղղված Հայաստանի գյուղական համայնքներում անգլերենի կրթության որակի բարելավմանը: Ձգտելով ընդլայնել ուսման հնարավորությունները՝ կազմակերպությունը կոչ է անում հանրությանը միավորել ջանքերը և իրենց ներդրումն ունենալ այս կարևոր գործում:

2011 թվականից ի վեր Հայաստանի 42 գյուղական համայնքում ավելի քան 5,550 ուսանող սովորել է անգլերեն ՔՈԱՖ-ի և ԱՄՆ դեսպանատան համագործակցության շնորհիվ: Ծրագրի արդյունքում տասնյակ գյուղաբնակ ուսուցիչներ ձեռք են բերել լեզվի դասավանդման արժեքավոր հմտություններ, որոնք հանգեցրել են անթիվ ուսանողների ակադեմիական/մասնագիտական հաջողություններին:

Այս տարվա մեր գարնանային դրամահավաքն ուղղված է ՔՈԱՖ-ի ֆորմալ և ոչ ֆորմալ անգլերեն ծրագրերին, որոնց նպատակն է զգալիորեն նպաստել անգլերենի իմացության և գրագիտության հմտությունների զարգացմանը: Դրանք ուսանողներին ծանոթացնում են նաև միջմշակութային, ժողովրդավարական արժեքներին ու ընդգծում կամավորության և անձնային աճի կարևորությունը:

2024-ը ՔՈԱՖ-ի համար հատկապես նշանակալի է, քանի որ միայն անգլերենի «Աքսես» ծրագրում մենք ունենք ռեկորդային 625 ուսանող: Դրամահավաքի ընթացքում գոյացած հասույթն ամբողջությամբ ուղղվելու է ծրագրի մեկ ամբողջական տարվա ուսումնական նյութերի տրամադրմանը:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

Աքորի գյուղից ուսանող Անի Խաչատրյանն ընդգծում է, որ ՔՈԱՖ-ի և ԱՄՆ դեսպանատան համատեղ ջանքերով մշակված նոր դասագրքերը «Աքսես» ծրագրի ուսանողներին հնարավորություն են տվել հետազոտություններ անել և իմանալ ավելին: «Այս դասագրքերն օգնում են մեզ ավելի վարժ խոսել անգլերեն և մեզ ավելի հարմարավետ զգալ»,- պատմում է Անին: Նրա դասընկեր Եվա Վարդևանյանը հավելում է. «Ծրագրի նյութն ու բովանդակությունն ավելի ժամանակակից ու հետաքրքիր են, այնպիսի թեմաներով են, որոնք այս պահին արդիական են մեր կյանքում»: Վանաձորցի Սամվել Պետրոսյանը նույնպես կիսվում է իր փորձով. «Ինձ դուր է գալիս, որ մենք խմբային աշխատանք ենք կատարում և ավելի շատ ենք շփվում: Նախկինում ես չէի կարողանում անգլերեն խոսել, բայց հիմա առաջընթաց եմ զգում»:

ՔՈԱՖ-ի գյուղական ծրագրերի ղեկավար Գայանե Վարդանյանը, անդրադառնալով ծրագրի նշանակությանը, ասում է. «Աքսես»-ը ոչ միայն լեզու է սովորեցնում, այլև նոր դռներ է բացում ավելի լայն գիտելիքների և հնարավորությունների համար: Անգլերենի այս ծրագրերը երիտասարդներին հնարավորություն են տալիս շփվել և ուսումնասիրել աշխարհը, իսկ մանկավարժներին՝ սովորելու ընթացքում կիրառել աշակերտակենտրոն մոտեցումներ՝ ուսուցման գործընթացը դարձնելով ավելի զվարճալի և համապատասխան ուսանողների բազմազան կարիքներին»:

Հիմա, առավել քան երբևէ, Հայաստանի գյուղաբնակ համայնքների երիտասարդները Ձեր աջակցության կարիքն ունեն իրենց ներուժը բացահայտելու համար: Յուրաքանչյուր ներդրում կարող է նպաստել նրանց լեզվական հմտությունների զարգացմանը, որն անհրաժեշտ է հաղորդակցության, տեղեկատվության ու կրթության հասանելիության, աշխատանքի հնարավորությունների ընդլայնման և ժամանակակից աշխարհի տարբեր ասպեկտներում ներգրավվածության համար: Դուք կարող եք միանալ դրամահավաքին՝ այցելելով մեր կայք և առցանց նվիրաբերություն կատարել: Յուրաքանչյուր ներդրում, անկախ չափից, մեկ քայլ ավելի կմոտեցնի ՔՈԱՖ-ի նպատակին և երկարաժամկետ ազդեցություն կունենա հարյուրավոր ուսանողների կյանքի վրա:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի ու կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ *82+* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Նանա Մարդոյան
Էլ. հասցե՝ *nana.mardoyan@coaf.org*
Բջջ.՝ *+374 55 003 723*